

## Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագրի շրջանակներում հատուցման մերժում

Հաճախորդն Ապահովագրական ընկերության հետ կնքել է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագիր: Հաճախորդը հայտնաբերել է, որ ապահովագրված ավտոմեքենայի անվադողերը գողացել են և հատուցման պահանջով դիմել է ապահովագրական ընկերություն: Ընկերությունը, սակայն, հրաժարվել է վնասի հատուցում տրամադրել:

Ծանոթ լինելով Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը Ընկերության դեմ ուղղված ապահովագրական հատուցում ստանալու պահանջով դիմել է Հաշտարարին:

Ընկերության կողմից Հաշտարարին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Հաճախորդի ավտոմեքենան ապահովագրված է գողությունից և ֆիզիկական վնասից՝ իր իրական արժեքի 46.38%-ի չափով, իսկ ոչ պայմանական չհատուցվող գումարը սահմանված է ավտոտրանսպորտային միջոցի գողության կամ հափշտակման դեպքում ապահովագրական գումարի 10%-ի չափով: Տվյալ դեպքում, որպես ոչ պայմանական չհատուցվող գումար դիտելով ապահովագրական գումարի 10%-ը, Ընկերությունը, որպես ապահովագրական պատահար դիտարկել է ավտոտրանսպորտային միջոցի գողությունը (հափշտակությունը), այն դեպքում, երբ ավտոտրանսպորտային միջոցի գողություն տեղի չի ունեցել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հաշտարարը կատարել է հատուցման ենթակա գումարի ինքնուրույն հաշվարկ, իսկ Ապահովագրական ընկերությունը, ընդունելով Հաշտարարի նկատառումների իրավացիությունը, որոշել է հաշտության գալ Հաճախորդի հետ և հատուցել նրա կրած վնասը:

Այսպիսով, Հաշտարարի միջնորդությամբ կողմերի միջև ծագած վեճը լուծվել է հաշտությամբ: